

*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՏԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2024*

---


*Հունիսի առաջին տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոոդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոոդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Հունիսի առաջին տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը ողջ հանրապետությունում եղել է նորմայից բարձր՝ 2-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են հունիսի 6-ին, 7-ին. Տավուշում՝ գրանցվել է +29...+33°C, Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +23...+25°C, նախալեռնային շրջաններում՝ +32...+34°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +34...+36°C, նախալեռնային շրջաններում՝ +26...+28°C, Շիրակում՝ +24...+28°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +24...+27°C, նախալեռնային շրջաններում՝ +29...+31°C, Գեղարքունիքում՝ +23...+26°C, Լոռիում՝ +26...+29°C, Արմավիրում, Արարատում՝ +33...+36°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +23...+26°C, նախալեռներում՝ +28...+30°C (Աշտարակ՝ +34°C):

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են հունիսի 2-ին, 3-ին. Տավուշում՝ +13...+15°C (Դիլիջան՝ +8°C), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +4...+6°C, նախալեռնային շրջաններում՝ +12...+14°C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +13...+17°C, նախալեռնային շրջաններում՝ +5...+10°C, Շիրակում՝ +5...+7°C, Կոտայքի լեռնային շրջաններում՝ +3...+8°C, նախալեռնային շրջաններում՝ +11...+13°C, Գեղարքունիքում՝ +5...+9°C, Լոռիում՝ +4...+9°C, Արմավիրում, Արարատում՝ +12...+15°C, Արագածոտնի լեռնային շրջաններում՝ +5...+7°C (Ծաղկահովիտ՝ +1°C), նախալեռներում՝ +10...+14°C:


## Տասնօրյակային տեղումներ



Հունիսի 1-2-ին, 4-ին հանրապետության առանձին շրջաններում, 8-10-ին՝ շրջանների զգալի մասում դիպվել է անձրև և ամպրոպ: Տասնօրյակի ընթացքում Լոռու, Գեղարքունիքի, Սյունիքի և Արարատյան դաշտի առանձին հարվածներում դիպվել է ուժեղ կարկտահարություն:

Տասնօրյակային տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 11-21մմ (38-71%), Լոռիում՝ 44-72մմ (129-173%), Տավուշում՝ 17-31մմ (56-98%), Արագածոտնի լեռնային շրջաններում՝ 22-33մմ (85-145%), նախալեռներում՝ 4-6մմ (37-42%), Գեղարքունիքում՝ 12-30մմ (63-113%), Կոտայքի լեռնային շրջաններում՝ 6-15մմ (28-73%), նախալեռներում՝ 6մմ (47%), Արարատում՝ 7-18մմ (86-180%), Արմավիրում՝ 4-5մմ (57-58%), Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ 3մմ (12%), նախալեռներում՝ 13մմ (115%), Սյունիքի նախալեռնային շրջաններում՝ 17-18մմ (55-88%), հովտային շրջաններում՝ 12-14մմ (60-113%):










## Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են հունիսի 2-ին և 3-ին. լեռնային շրջաններում՝ +1...+4°C, Արարատյան դաշտում, Վայոց ձորի նախալեռներում, Տավուշի և Սյունիքի հովտային շրջաններում՝ +10...+14°C:



**Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ**



## Հացահատիկային մշակաբույսեր



Աշնանացան ցորենը հովտային շրջաններում գտնվել է մոմային հասունացման փուլում, նախալեռնային շրջաններում այն ծաղկել է, լեռնային շրջաններում հասկակալել, տեղ-տեղ՝ ծաղկել: Հովտային և նախալեռնային շրջաններում աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 75-91սմ, լեռնային շրջաններում՝ 49-53սմ, տասնօրյակային աճը կազմել է 4-11սմ:

Գարնանացան գարին դեռ գտնվել է ծեղացողունի ներքին հանգույցների առաջացման փուլում: Առաջացել են եգիպտացորենի 7-9-րդ տերևները:

Բույսերի աճի ու զարգացման համար կարևոր գործոն հանդիսացող հողի արդյունավետ

խոնավության պաշարները Մերձավանում աշնանացանի դաշտում 0-10սմ շերտում կազմել է 16մմ, 0-20սմ շերտում՝ 38մմ, 0-30սմ շերտում՝ 67մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել է 6-18մմ-ով:

## Պտղատուներ և խաղող

Հովտային շրջաններում շարունակվել է կորիզավոր պտղատուների հասունացումը և ընտրովի բերքահավաքը:

Խաղողի վազի մոտ սկսվել է ողկույզի ձևավորումը:

Նախալեռնային շրջաններում շարունակվել է կորիզավոր պտղատուների աճը, լեռնային շրջաններում՝ ձևավորումը:





Կարտոֆիլի ծաղկում

### **Քանաչարանոցային մշակաբույսեր, կարտոֆիլ**

Հովտային շրջաններում առաջացել է բանաչարանոցային մշակաբույսերի ծաղկաբույլերը, ձմերուկի՝ երրորդ փերևը: Նախալեռնային շրջաններում կարտոֆիլի ծաղկումն ավարտվել է, լեռնային շրջաններում առաջացել է կողային ընձյուղները:

### **Ծխախոտ և խոտաբույսեր**



Նախալեռնային շրջաններում դիտվել է ծխախոտի 7-9-րդ փերևի առաջացումը:

Հովտային շրջաններում առաջին հունձից հետո առվույտը ծաղկել է:

Ծխախոտի և խոտաբույսերի դրության գնահատականը լավ և բավարար է: